

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՄԱՎԱՐՄԱՆ ՈՒՆՎՈՐԻՏԵՏՈՐ,

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎՈԿՏՈՐ ԳՐԱԾԵՍՈՐ

Գ Ձ ԳԱԼՈՅԱՆ

«12» դեկտեմբերի 2022թ.



ԿԱՐԾԻՔ

առաջատար կազմակերպության

Մենթ Սեյրանի Ֆրանգույանի «Հարկային ծառայողների գործունեության գնահատման համակարգի կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Կառավարման ամբոնի նիստում: Նիստին ներկա էին՝ Կառավարման ամբիոնի վարիչ տ.գ.թ., դոցենտ Գ. Ասլանյանը (նախագահող), տ.գ.թ., դոցենտ Ի. Մխիթարյանը (գրախոսող), տ.գ.թ., դոցենտ Ա.Կարախանյանը (գրախոսող), տ.գ.թ., ավագ դասախոս Մ. Առաքելյանը (գրախոսող), տ.գ.թ., դոցենտ Ն.Շահնազարյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Օրդյանը, տ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, տ.գ.թ., տ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, տ.գ.թ., դոց. Թ. Օհանյանը, տ.գ.թ., տ.գ.թ., դոցենտ Ա. Մինասյանը, տ.գ.թ., դոցենտ Մ.Քոչարյանը, ասիստենտներ Ա. Մանասյանը, Մ. Կարախանյանը, ամբիոնի ավագ լաբորանտ Մ. Մնացականյանը, ինչպես նաև ասպիրանտներ և հայցորդներ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Անկախացումից ի վեր հարկային արդյունավետ համակարգի ձևավորումը դասվում է Հայաստանի Հանրապետության առանցքային հիմնախնդիրների և սնտեսական մարտահրավերների շարքին: Համակարգ, որի գործունեությունն առավելագույնս կնպաստի հարկահավաքման գործընթացի արդյունավետ կազմակերպմանն ու ստվերային տնտեսության կրճատմանը: Այս նպատակով պայմանավորված ՀՀ-ում ձևավորվել և փորձարկվել են հարկային համակարգի մի շարք կառուցակարգեր ու գործիքներ, որոնցից շատերը գործում են նաև այսօր: Կատարված միջոցառումները միտված են եղել հարկային համակարգի բարեփոխումներին և հանդիսացել են հարկային մարմնի կոնկրետ ժամանակաշրջանի զարգացման ռազմավարության բաղկացուցիչ մասը: Եվ չնայած հարկային համակարգի ձևավորումից ի վեր ներդրվել են բազմաթիվ նոր կառուցակարգեր, այնուամենայնիվ հարկային համակարգում բարեփոխումները պետք է կրեն շարունակական բնույթ՝ համահունչ սոցիալտնտեսական զարգացմանը: Աներկբա է, որ հարկային արդյունավետ համակարգի ձևավորումը հանդիսանում է կարևորագույն հիմնախնդիր, ինչի համար անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրել և վերլուծել ՀՀ հարկային մարմնի ռազմավարությունները, գնահատել ներդրված համակարգերի արդյունավետությունը՝ առաջարկելով հարկային բարեփոխումների ուղղություններ:

Արդյունավետ հարկային համակարգ ձևավորելու և հարկային բարեփոխումներ իրականացնելու համար շատ կարևոր է հասկանալ, թե հարկային համակարգում կառավարման ինչ խնդիրներ կան: Վերջիններս առաջանում են հարկային համակարգի կողմից իրականացվող գործառնությունների անարդյունավետ գնահատման կամ գնահատման բացակայության պատճառով: Գնահատելով հարկային ծառայողների գործառնությունները, դրանց իրականացման

անհրաժեշտությունը և արդյունավետությունը՝ կարելի է բացահայտել հարկային համակարգում կառավարման խնդիրները և այն կառուցակարգերը, որոնցով հնարավոր է դրանք լուծել, ինչպես նաև արդյունավետ հարկային համակարգ ձևավորելու հնարավորությունները: Այս տեսանկյունից կարևոր դեր ու նշանակություն ունեն հարկային ծառայողների գործառույթների գնահատման հարցերի ուսումնասիրությունը: Դեռ ավելին, հարկային ծառայողների գործառույթների գնահատման համակարգի ձևավորումը այժմեական է և դրանից է ինչ–որ չափով կախված արդյունավետ հարկային համակարգի ձևավորումը: Այդ ամենը պայմանավորում է հարկային ծառայողների գործունեության գնահատման համակարգի կառավարման բարեփոխումների և արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը, ինչով էլ պայմանավորված է սույն ատենախոսության արդիականությունը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը, ստացված արդյունքների հավաստիությունը, գիտական նորույթը և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության հիմնական նպատակը՝ հարկային ծառայողների գործունեության գնահատման հայեցակարգի և վերջինիս այն ուղղությունների մշակումն է, որոնց կիրառմամբ կմեծանա հարկային վարչարարության արդյունավետությունը: Նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել հարկային ծառայողների գործառույթների իրականացումը,
- բացահայտել հարկային ծառայողների կողմից իրենց գործառույթների իրականացման ժամանակ առաջացող խնդիրները,
- հիմնավորել հարկային մարմնի գործառույթների գնահատման և ձկուն մեխանիզմների ձևավորման անհրաժեշտությունը,

- պարզել, թե ինչ կապ գոյություն ունի հարկային ծառայողների գործառույթների գնահատման և հարկային համակարգի արդյունավետության մեջ,
- ապացուցել հարկային ծառայողների գործառույթների գնահատման հայեցակարգի անհրաժեշտությունը, դերն ու նշանակությունը արդյունավետ հարկային համակարգ ձևավորելու գործում,
- սահմանել հարկային ծառայողների գործառույթների գնահատման հիմնական ուղղությունները,
- մշակել հարկային ծառայողների աշխատանքների գնահատման հիմնական սկզբունքներ, որոնք կդիտարկվեն որպես պարտադիր պայմաններ՝ հարկային ծառայողների աշխատանքը գնահատելիս,
- նկարագրել հարկային ծառայողների գործառույթների գնահատման հայեցակարգի ակնկալվող արդյունքները և դրանց չափելիությունը:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան:

Հետազոտության օբյեկտն է ՀՀ հարկային ծառայողի գործունեությունը: Հետազոտության առարկան հարկային ծառայողների գործառույթների գնահատման հիմնախնդիրներն ու գործառույթների գնահատման համակարգի ազդեցությունն է հարկային վարչարարության վրա:

Ատենախոսության տեսամեթոդաբանական հիմքերը և տեղեկատվական ապահովումը:

Ատենախոսության համար հիմք են հանդիսացել կառավարման տեսության դասական աշխատությունները, հայրենական և արտասահմանյան կողմից հարկային համակարգի կառավարման և բարեփոխումների բնագավառում կատարված ուսումնասիրությունները, տնտեսագիտության, կառավարման, ֆինանսական կառավարման, իրավագիտության ժամանակակից տեսությունների

հիմնական դրույթները, մեթոդները, մոդելները, հայեցակարգերը, հարկային համակարգում տեղի ունեցող բարեփոխումները, հարկային հարաբերությունները կարգավորող օրենքները, օրենսդրական ակտերն ու ՀՀ կառավարության որոշումները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայք էջում հրապարակված հաշվետվությունները, ՀՀ ՊԵԿ ռազմավարությունները, Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) և Համաշխարհային բանկի հրապարակումներն ու տեղեկագրերը, ՀՀ ՊԵԿ նախագահի հրամանները և ՀՀ ՊԵԿ կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված տեղեկատվական նյութերն ու տվյալները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, տնտեսաչափական, համադրությունների, համեմատությունների, վերլուծությունների, գրաֆիկական մեթոդներ ու մոդելներ:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը կայանում են հետևյալում՝

- Հարկային մարմնի՝ գործառույթների գնահատման նպատակով որպես հարկային ծառայողների աշխատանքի գնահատման պարտադիր պայմաններ բացահայտվել են հարկային ծառայողների աշխատանքի գնահատման հիմնական սկզբունքները, մշակվել է հարկային մարմնի գործունեության հայեցակարգը և դրա ուղղությունները:
- Հարկային մարմնի գործունեության հայեցակարգով մշակվել են սովերային տնտեսության գնահատման և կրճատման գործառույթներ, որոնց իրականացումը պետք է միտված լինի հարկային մարմնի առաքելության իրականացմանը:
- Մշակվել է հարկային մարմնի կառավարման կազմակերպարավական նոր կառուցվածք, որի հիմքում դրվել է նախագծային կառուցվածքի մոդելը:

- Առաջարկվել է հարկային մարմնի կառավարչական վարքագծի նոր մոդելներ, որոնք բնութագրում են հարկային մարմնի վարքագիծը հարկային ծառայողներին գործառույթներ պատվիրակելիս, այսինքն, օգտագործելով այդ մոդելները հարկային մարմինը վարքագծային առանձին մոտեցումներ պետք է ցուցաբերի աշխատողներից յուրաքանչյուրի նկատմամբ՝ կոնկրետ աշխատանք հանձնարարելով այն հարկային ծառայողներին, ովքեր իրենց վարքագծային տեսանկյունից առավել են համապատասխանում տվյալ աշխատանքին:
- Հարկային ծառայողների աշխատանքի գնահատման նպատակով գործող գնահատման մեխանիզմների փոխարեն մշակվել է գնահատման նոր մեխանիզմ, որի հիմքում ոչ թե հարկային ծառայողների պարզևատրումն է, այլ քանակական գնահատականների փոխարեն առաջարկվել է հարկային ծառայողների աշխատանքը գնահատել կոնկրետ գործառույթին աշխատողի համապատասխանությամբ և եթե ծառայողը չի համապատասխանում գործառույթի իրականացմանը, ապա անհաժեշտ է բացահայտել անհամապատասխանության պատճառները, արդյունքում կամ վերապատրաստել նրան, կամ պատվիրակել գործառույթը կամ վերաձևակերպել այն:

Հետազոտության արդյունքների կիրառումը և գործնական նշանակությունը:

Ատենախոսությունն համակարգված գիտական ուսումնասիրություն է, որում դիտարկված հիմնահարցերը, կատարված վերլուծությունները և առաջարկվող լուծումները կարող են օգտակար լինել հարկային մարմնի կառավարման ինդիքների լուծման հարկային ծառայողների գործառույթների գնահատման, հարկային քաղաքականության կատարելագործման արդյունավետ հարկային համակարգ ձևավորելու հարկային համակարգի զարգացման հայեցակարգի ձևավորման, պետության տեսեսական քաղաքականության առանձին

ուղղությունների մշակման և իրագործման գործընթացներում: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ կառավարության կողմից տնտեսական քաղաքականության մշակման և հարկային բարեփոխումների նախաձեռնման, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից հարկային հարաբերությունների կարգավորմանն ուղղված օրենսդրաիրավական հիմքերի ձևավորման ժամանակ:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է հանրապետության տնտեսության զարգացման արդի փուլում հարկային արդյունավետ համակարգի, հարկային բարեփոխումների շարունակականության ապահովման, իրավական դաշտի հետագա կատարելագործման անհրաժեշտությամբ: Գիտական արդյունքները և գործնական առաջարկությունները կարող են օգտակար լինել նաև հարկային քաղաքականության իրականացման ու հարկային համակարգի ձևավորմանն առնչվող ուսումնամեթոդական ձեռնարկների մշակման և այդ բնագավառի մասնագետներ պատրաստելու ժամանակ:

Ատենախոսության կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ և առաջարկություններ բաժնից և օգտագործված գրականության ցանկից:

Հեղինակն ատենախոսության ներածությունում հիմնավորում է ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, ինչպես նաև գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին՝ **«ՀՀ հարկային համակարգի գործառույթների գնահատումը հարկային համակարգի ռազմավարական ուղղություն»** գլխում հեղինակի կողմից ուսումնասիրվել է հարկային համակարգի զարգացման ռազմավարությունները և դրանց անարդյունավետության պատճառները, ինչպես

նան անդրադարձ է կատարվել ստվերային տնտեսությանը որպես հարկային մարմնի գործառույթների անարդյունավետ գնահատման արդյունք:

Ատենախոսության երկրորդ՝ «Հարկային մարմնի գործառույթների գնահատման գործող համակարգը և առկա հիմնախնդիրները ՀՀ-ում» գլուխը նվիրված է Հարկային մարմնի գործառույթների գնահատման կիրառվող մեխանիզմների վերլուծությանը: Քննարկվել են նաև հարկային համակարգում առկա հիմնախնդիրները՝ որպես հարկային գործառույթների անարդյունավետության հետևանք և ներկայացվել է հարկային մարմնի գործառույթների գնահատման նոր համակարգի ներդրման անհրաժեշտությունը և հիմնական ուղղությունները:

Ատենախոսության երրորդ՝ «Հարկային համակարգի գործառույթների գնահատման նոր համակարգի ներդրումը և հարկային համակարգի արդյունավետությունը» գլխում քննարկվել են հարկային մարմնի գործառույթների գնահատման հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը և ազդեցությունը հարկային համակարգի արդյունավետության վրա, ինչպես նաև ներկայացվել հարկային ծառայողների գործառույթների գնահատման համակարգը, ակնկալվող արդյունքները և չափելիությունը:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող ատենախոսությունն արժանիքներով հանդերձ ունի նաև մի շարք թերություններ, որոնցից կցանկանայինք առանձնացնել հետևյալները.

1. Ատենախոսության գիտական նորությունները հարկ էր ներկայացնել առավել հանգամանալից տեսքով: Մասնավորապես՝ մշակվել է հարկային մարմնի գործունեության հայեցակարգ, առաջարկվել է հարկային մարմնի կառավարչական վարքագծի նոր մոդելներ, որոնք անհրաժեշտ էր ներկայացնել առավել հանգամանալից և հիմնավորված:

2. Ատենախոսը բազմիցս նշում է սովերային տնտեսության կրճատման անհրաժեշտությունը որպես հարկային եկամուտների ավելացման աղբյուր, սակայն անհասկանալի է, թե այդ ինչ միջոցառումների շնորհիվ է ատենախոսը հասնելու սովերային տնտեսության կրճատմանը: Իր կողմից առաջարկվող հարկային եկամուտների մասով կրճատումը բացարձակապես կապ չունի սովերային տնտեսության ծավալների կրճատման հետ: Զուտ բարի ցանկությամբ սովերային տնտեսությունը չի կրճատվի:

3. Ատենախոսն առաջարկել է հարկային մարմնի կառավարման կազմակերպային րավական նոր կառուցվածք: Նախ կազմակերպային րավական կառուցվածք, որպես այդպիսին, գոյություն չունի: Այնուհետև՝ առաջարկված կառուցվածքը զուտ տեսական բնույթի մատրիցային կառուցվածք է՝ երեք անորոշ նախագծերով և ստորաբաժանումներով: Նման տեսական կառուցվածքներ կան մենեջմենթի բոլոր դասագրքերում: Բացի այդ, առաջարկվող կառուցվածքը անհարիր է հարկային մարմնի գործունեության ժամանակակից ուղղություններին: Հեղինակի կարծիքով, կառուցվածքում ավելորդ են այնպիսի առանցքային ստորաբաժանումներ, ինչպիսիք են հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության, ռազմավարական ծրագրերի, մեթոդաբանության և ընթացակարգերի, հարկային վարչարարության, համալիր հարկային ստուգումների, ներքին աուդիտի, ներքին անվտանգության և այլն: Առաջարկվող կառուցվածքում աշխատակիցների թիվը կկրճատվի առնվազն 75%-ով:

4. Պլանային ցուցանիշների բացառումը և հարաբերական ցուցանիշների կիրառումը աշխատանքի քանակական գնահատման ժամանակ հնչում է ոչ հիմնավոր և բացակայում է տրամաբանությունը:

5. Հարկային մարմնի գործառույթների գնահատման ստորաբաժանման ստեղծումը հիմնավորված չէ որևիցե տնտեսական հաշվարկով, առավել ևս, դրա խիստ անհրաժեշտությունը չկա, քանզի այդ գործառույթը կարելի է պատվիրակել

ՄՌԿ ստորաբաժանմանը, ինչը հանդիսանում է վերջինիս հիմնական գործառույթներից մեկը:

6. Աշխատանքի երրորդ՝ «Հարկային համակարգի գործառույթների գնահատման նոր համակարգի ներդրումը և հարկային համակարգի արդյունավետությունը» գլխում հարկային ծառայողների գործառույթների գնահատման համակարգը ներկայացնելուն գուզահեռ անհրաժեշտ էր ներկայացնել հարկային մարմինների կադրերի կառավարման ոլորտում միջազգային միտումները, հարկային ծառայողների գործունեության գնահատման համար կիրառվող արդիական գործիքակազմը և խթանման ինդիքները, հարկային ծառայության գրավչության բարձրացման ուղիները, ինչն առավել արժանահավատ եզրահանգումների հիմք կհանդիսանար:

7. Հեղինակի կողմից որպես գիտական նորույթ ներկայացվել է սովետային տնտեսության գնահատման և կրճատման գործառույթների քննարկումը, որոնց իրականացումը պետք է միտված լինի հարկային մարմնի առաքելության իրականացմանը: Այնուհանդերձ այն կրում է բացառապես տեսական բնույթ, քանի որ համապարփակ կերպով ներկայացված չեն դրանց իրականացման կառուցակարգերը: Ավելին, անհրաժեշտ էր թվային վերլուծության միջոցով ներկայացնել վերջին տարիներին հարկային հավաքագրումների դինամիկան, ինչպես նաև վերջինիս աճը և նվազումը պայմանավորող գործոնների մեջ սովերի կրճատման դերակատարումը: Աներկբա է, որ հարկերի հավաքագրումը և սովերը անհրաժեշտ է դիտարկել մեկ ընդհանուր շղթայի մեջ, և եթե սովերն առկա է այդ շղթայի որևէ օղակում, ապա խաթարվում է ամբողջ շղթայի գործունեությունը:

8. Որպես նախորդ դիտողության տրամաբանական շարունակություն անհրաժեշտ է շեշտել, որ աշխատանքում գերակշռում են նկարագրությունները և բացակայում է վերլուծական գործիքակազմը, մասնավորապես՝ բացակայում են խորքային վերլուծությունները (քանակական և որակական տվյալներ, քանակական տվյալների դինամիկայի վերլուծություն, կրճատման կամ ավելացման

պատճառների բացահայտում), ինչպես նաև հարկային ծառայողների գործունեության գնահատման համակարգի վրա ազդող տարբեր գործընթացների վերաբերյալ համապարփակ գնահատականը:

9. Էջ 24-25 հեղինակը ներկայացրել է 2015-2019թթ. ՀՀ ՊԵԿ ստուգումների ու ուսումնասիրությունների քանակը, որտեղ տարբեր տարիներում ստուգումների 56-69%-ում հայտնաբերվել են խախտումներ, որի արդյունքում հանգել է այն եզրակացությանը, որ ՀՀ-ում սովերային տնտեսությունը կազմում է 63,31%, ինչը մեթոդապես սխալ եզրահանգում է:

10. Էջ 82-ում հեղինակը պնդում է, որ եթե ՀՀ-ում սովերային տնտեսությունը կրճատվի 754,86 մլրդ. դրամով, ապա հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կաճի 12,5%-ով և կկազմի 33,5%: Կարծում ենք նմանօրինակ պնդումը ճիշտ չէ: Նախ անհրաժեշտ էր գնահատել սովերային տնտեսությունը, հաշվարկել կրճատման արդյունքում հարկման բազայի փոփոխությունը, ՀՆԱ-ի փոփոխությունը, հարկային դրույքաչափերը, որի արդյունքում էլ կարելի էր գնահատել հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը:

11. Աշխատանքի 3.2 բաժնում ստեղծված ներկայացնում է հարկային ծառայողների վարքագծի 3 մոդել, որը կառուցված է միայն իր ենթադրությունների հիման վրա: Կարծում ենք նմանօրինակ մոդելներ առաջարկելու համար նախ անհրաժեշտ էր վերլուծել հարկային ծառայողների վարքագիծը, գնահատել արդյունավետությունը, բացահայտել թերությունները, որից հետո միայն կարելի էր առաջարկել նոր մոդելներ:

Եզրակացություն

Մեր Մեյրանի Ֆրանգույանի «Հարկային ծառայողների գործունեության գնահատման համակարգի կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն հետազոտություն է: Այնուհանդերձ, վերոնշյալ դիտողությունները, մեր կարծիքով, էական են, ինչը նվազեցնում է աշխատանքի

գիտահետազոտական բաղադրիչը, ուստի Մհեր Մելքյանի Ֆրանգուլյանի «Հարկային ծառայողների գործունեության գնահատման համակարգի կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը C.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ գիտական աստիճանի շնորհման վերաբերյալ որոշման կայացումը թողնվում է մասնագիտական խորհրդի հայեցողությանը:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Կառավարման ամբիոնի նիստում 07.12.2022թ (արձանագրություն թիվ 5):

ՀՊՏՀ «Կառավարման» ամբիոնի վարիչ,
տ.գ.թ., դոցենտ՝

Գ. Ասլանյան

ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.՝

Խ. Մխիթարյան

ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.՝

Ա. Կարախանյան

ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի ավագ դասախոս, տ.գ.թ.՝

Մ. Առաքելյան

Գ. Ասլանյանի, Խ. Մխիթարյանի, Ա. Կարախանյանի և Մ. Առաքելյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտքարտուղար՝

Է. Մելիքյան

12. 12. 2022

